ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի

դաստիարակչական նպատակները

Ուսուցչուհի՝ Լուսիկ Աղախանյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ: ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ ..... 4
«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ ..... 4
ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ..... 5
ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻՆ ..... 6
ԴԱՍԻ ՊԼԱՆ ..... 7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 11
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 12

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի՝ որպես բարեփոխումներ նախաձեռնողի դերի կարևորությունը երբեք այդքան ակնհայտ չի եղել, որքան այսօր. նա նպաստում է ընկալմանն ու հանդուրժողականությանը: XXI –րդ դարում այս դերը ավելի վճռորոշ է: Նեղ ազգայնականությունից դեպի համընդհանուրը, էթնիկական և ազգային նախապաշարումներից դեպի հանդուրժողականություն, ըմբռնում և բազմակարծություն, ինքնակալությունից դեպի ժողովրդավարություն տանող փոփոխությունների անհրաժեշտությունը հսկայական պատասխանատվություն է դնում ուսուցիչների վրա, որոնք մասնակցում են նոր սերնդի բնավորության և մտքի ձևավորմանը: Ուսուցիչները միշտ գիտակցում են, որ իրենք կենսականորեն անհրաժեշտ և նշանակալի գործ են կատարում:

Նրանք միշտ հաշվի են առնում աշակերտի ստեղծագործական ունակություններն ու երևակայությունը: Միշտ պետք է սովորոել: Երբեք չպետք է մտածել, որ առարկան դասավանդելու համար գիտենք բոլոր պատասխանները կամ բավարար նյութ ունենք: Անընդհատ պետք է կարդալ: Չպետք է մնալ կաղապարված մասնագետ: Պետք է քննարկել ուսուցիչների հետ, սովորել ավելի շատ լսել աշակերտներին: Լավ ուսուցիչն այնքան է սովորում իր աշակերտներից, որքան ինքն է սովորեցնում նրանց: Խրախուսենք երկխոսությունը, չկառչենք դասագրքից: Ամեն ոք գիտի. «Սովորելը երբեք չի վերջանում»: Ճիշտ է նաև այն, որ մեզանից ամեն մեկը պետք է ձգտի

առաջխաղացման: Լավ ուսուցչի ազդեցությունը երբեք չի ավարտվում: Այն շարունակվում է, հոսում առաջ, ինչպես էվոլուցիայի հոսանքն է անցնում սերունդներով:

## «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ: ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ

Դասարանում ունենալ «Բնագիտական կենտրոն»:

Հավաքագրել հարուստ գրականություն:

Նյութեր-

Օրինակ-Միջատների-

Թռչունների-

Դեղաբույսերի-

Հայրենիքի դրոշը, գերբը, զինանշանը, քարտեզը, օրհներգը (մեծ պլակատով)

Մանրադիտակ

Քարերի տեսակներ

## «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի օգնությամբ կրտսեր դպրոցականը քայլ առ քայլ կսկսի «կառուցել» իր աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Իրեն շրջապատող աշխարհին ծանոթանալուն զուգահեռ, երեխան անընդհատ ընդլայնելու է իր պատկերացումները մտահորիզոնը, ձեռք է բերելու կարևոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Դասընթացի ուսումնասիրության արդյունքում աշակերտը ձեռք է

բերելու ոչ միայն զուտ առարկայական գիտելիքներ, այլև համապատասխան կարողություններ ու հմտություններ, որոնք շատ կարևոր հիմք կդառնան ապագայի համար: Ուսումնասիրելով իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան ու անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանալով տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց և նրանց սոցիալական դերին՝ աշակերտները ձեռք կբերեն ոչ միայն գիտելիքներ, այլև շատ անհրաժեշտ ու կենսական կարողություններ ու հմտություններ, սոցիալական հաղորդակցման փորձ, կծանոթանան այդ հաղորդակցությունը կարգավորող նորմերին ու կանոններին: Այս դասընթացի կարևոր նպատակներից մեկն էլ աշակերտների դիտողական ճանաչողական կարողությունների զարգացումն է: Այդ նպատակով պահանջվում է շատ լինել բնության գրկում, դիտել շրջապատում կատարվող փոփոխությունները, ճանաչել և ուսումնասիրել շրջապատող բույսերը, կենդանիները, նրանց վարքը, ապրելակերպը:ՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 3-րդ դասարանի չափորոշիչներն ավելի են կարևորում ուսումնասիրությունները: Ակնկալվում է, որ աշակերտը պետք է կարողանա հարցեր առաջադրել, պարզ հիպոթեզներ ձևակերպել, կանխատեսումներ անել, տվյալներ հավաքել և ավելի մեծ ճշգրտությամբ օգտագործել մետրական համակարգը: Աճում է տվյալների օգտագործման դերը՝ եզրակացություններ ու մտահանգումներ անելիս: Քննվում են վարքի և ֆիզիկական ադապտացիաները՝ կապված կենդանիների կենսական կարիքների հետ: Ավելի խորությամբ ուսումնասիրվում է կենդանի համակարգերի հասկացությունը՝ ջրային և ցամաքային սնման շղթաների և տարբեր միջավայրերի մեջ: Ցուցադրվում են բնական աշխարհի օրինաչափությունները՝ լուսնի

փուլերի, մակընթացությունների, եղանակային փոփոխությունների, ջրի շրջապտույտի և կենդանական կյանքի շրջպտույտի տեսանկյունից: Հողի բաղադրիչների ուսումնասիրության միջոցով երկրաբանական գաղափարներն են ներկայացվում:

## ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻՆ

***Լեզվական-*** Առաջարկում եմ աշակերտներին պատմել, թե ինչ գիտեն տարվա եղանակների մասին: Ո՞վ է առիթ ունեցել մանրամասն ուսումնասիրել իր սիրած եղանակը: Ո՞վ կարող է նկարագրել տարվա իր սիրած եղանակը (կամ արտասանել որևէ բանաստեղծություն):

***Տարածական մտածողություն-*** Ցուցադրել Այվազովսկու 9-րդ ալիքը:

***Երաժշտական մտածողություն-*** Միացնել Վիվալդիի «Տարվա եղանակներ»-ը:

***Տրամաբանական-*** մաթեմատիկական, ներանձնային մտածողություն:

Առաջարկել նկարել սիրած տարվա եղանակը, գրել նրա ամիսները, դրանց առանձնահատկությունները: Մեղմ երաժշտության տակ փակել աչքերը և փորձել մտովի տեղափոխվել տարվա այդ եղանակը:

***Մարմնաշարժողական մտածողություն-*** Առաջարկել աշակերտներին գտնել առանձնահատուկը ամեն մի տարվա եղանակում: Հագնել յուրաքանչյուր տարվա եղանակին համապատասխան հագուստ: Կունենանք «մարմնավորված» բոլոր չորս եղանակները:

***Ներանձնային տարածական մտածողություն-*** Առաջարկել աշակերտներին մեկ անգամ ևս մտովի «տեսնել» բոլոր եղանակները մտաբերել դրանց արտաքին տեսքը, որ իրենք էին ներկայացրել քիչ առաջ, հիշել այն լուսանկարները, որ տեսել էին դասի ընթացքում: Ապա առաջարկել նկարել տարվա եղանակները առանձին թղթի վրա, որպես անհատական (կամ խմբային աշխատանք):***Միջանձնային մտածողություն-*** Կազմակերպել ցուցահանդես «Տարվա եղանակները» խորագրով: Բոլոր աշխատանքները հավաքել, ստեղծել ալբոմներ (նկարներ, բանաստեղծություններ, հեքիաթներ):

## ԴԱՍԻ ՊԼԱՆ

1. Դասի թեման « Տարվա եղանակները» (4 ժամ)
2. Դասի նպատակը

ա) Աշակերտները կճանաչեն շրջակա միջավայրը և կծանոթանան բնության առանձնահատկություններին:

բ) Դիտարկումների միջոցով կխորացնեն տարվա եղանակների մասին գիտելիքները:

գ) Տեղեկություններ կստանաք այն մասին, թե ինչպե՞ս պետք է իրենց պահեն բնության գրկում:

դ) Կսովորեն գնահատել բնության գեղեցկությունը տարվա բոլոր եղանակներին:

ե) Հստակ կպատկերացնեն՝ ինչու՞ են առաջանում գիշեր-ցերեկ հերթափոխը, տարվա տարբեր եղանակները:

3. Դասի ընթացքը

ա) Խթանման փուլ

Բոլոր երեխաներին մասնակից դարձնելով՝ կրկնել կենդանի և անկենդան բնությունը, նրա բաղադրիչ մասերը:

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու համար « Գարուն» բառով կատարել « Պրիզմա» վարժությունը:




Երբ աշակերտները պրիզմայի մեկնաբառն ու վերջնաբառը կկապեն իրար, կարելի է անցնել դասանյութի ընթերցմանը:

Այս մեթոդը ապահովում է սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով ու կապ հատատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև:

բ) Ընկալման փուլ- Դասանյութի ընթերցումից հետո գնալ բնության գիրկ (դպրոցամերձ հողամաս): Երեխաներին բաժանել վերնագրված հարցաշարային թերթիկներ, որոնք նրանք մեկ-երկու բառով կարող են լրացնել:

Հարցաթերթիկ

1. Ինչպիսի՞ եղանակ է:
2. Ինչպիսի՞ն է երկինքը:
3. Փչու՞մ է, արդյոք քամի:
4. Ավելացե՞լ, թե՞ պակասել է գետերի ջուրը:
5. Հալվե՞լ է արդյոք ձյունը մոտակա լեռներում: Ինչու՞:
6. Ի՞նչ է եղել հալված ձյան ջուրը:
7. Ինչպե՞ս է փոխվել հողը գարնանը:
8. Ինչպե՞ս է փոխվել բնությունը (ծառերը, խոտը, այգիները)
9. Ի՞նչ ծառերի հանդիպեցիր
10. Ո՞ր ծառերն են ամենից շուտ ծաղկել:
11. Ո՞ր ծաղիկներն էին շուտ ծաղկել:

գ) Կշռադատման փուլ- Ամփոփել հարցաթերթիկները:

Երգել «Գարուն» երգը

«Ես և շրջակա աշխարհը» տետրում նկարել գարնանային տեսարան, այդ ընթացքում լսել Վիվալդիի «Տարվա եղանակները» մեղեդին:

դ) Ամփոփում- Հանձնարարել կարդալ «Ուզում եմ ավելին իմանալ» բաժինը:

Քննարկման ժամանակ օրինակներ են բերվում:

Օրինակ՝ Ի՞նչ կլինի, եթե ձյունը չհալվի, արևը չծագի, հողը չտաքանա, գետերը չհորդանան, ծառերը չծաղկեն, ծաղիկները չբացվեն, գիշեր-ցերեկ չլինի և այլ նմանատիպ հարցեր:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էքսկուրսիաները մեծ դեր ունեն երեխաների կյանքում: Նրանք հաճույքով դիտում և դիտարկում են շրջակա աշխարհը և ինքնուրույն արտահայտում իրենց հույզերն ու զգացմունքները: Կյանքը նրանց համար բնության նման բազմագույն և խորհրդավոր է:

Երեխան պետք է հասկանա, թե ի՞նչ է պահանջվում իրենից և ի՞նչ կարող է անել ինքը: Նա պետք է յուրացնի իր տարիքին համապատասխան տեսական նյութ, անի գործնական աշխատանքներ, դիտարկումներ և գա որոշակի եզրահանգման:

Նյութի ավելի հեշտ յուրացման համար երեխաներն ուսուցչի հետ միասին պետք է կատարեն ուսուցողական զբոսանքներ, էքսկուրսիաներ բնության գրկում:

Քանի որ երեխաները երկրի ապագա կերտողներն են, նրանք պետք է իմանան երկիր մոլորակին սպառնացող վտանգների մասին և կարողանան արտահայտել իրենց սեփական վերաբերմունքը, հատկապես թափոնների հիմնախնդրի վերաբերյալ: Թափոններն ամենուր են ու տեսանելի բոլորի համար: Երեխան պետք է սովորի բարելավել իր շուրջը եղած իրավիճակը, պարզապես փոխելով որոշ սովորություններ և հասկանա, որ կարելի է լուծել թափոնների կառավարման հարցը:

Նա պետք է գիտակցի նաև երկրի գլոբալ տաքացման  վտանգավորությունը, որն առաջանում է ջերմոցային էֆեկտի հետևանքով: Սակայն նա առայժմ ոչնչով չի կարող միջամտել այդ հարցին, լավագույնս կարող է նամակ հղել հասցեատերերին խնդրելով ձեռք առնել համապատասխան միջոցներ և փրկել երկիր մոլորակը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ուսումնառությունն ու դասավանդումը կրտեսեր դպրոցում»- ԱՅՐԵՔՍ

«Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը». ԱՅՐԵՔՍ «Միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհուրդ». «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով»

Ջինի Լ. ՍԹԻԼ Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ